ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 103	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը		*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	08.12.1995
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	08.12.1995
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	08.12.1995	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Լ. Տեր-Պետրոսյան
8 դեկտեմբերի 1995 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 1995 թ. N 103

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայկական ատոմային էլեկտրակայանի անընդմեջ աշխատանքի կարևորությունից և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օգտագործված միջուկային վառելիքը Հայաստանի Հանրապետությունից դուրս բերելու համար անհրաժեշտ պայմաններ դեռևս չեն ստեղծվել, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությանը օգտագործված միջուկային վառելիքը չոր եղանակով պահել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ մինչև դրա տեղափոխման կամ վերամշակման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1995 թվականի դեկտեմբերի 8-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ